ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-1309[2]-06.04.2026-ԱՌՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 47.36-րդ հոդվածից հետո լրացնել նոր 47.37-րդ հոդված՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 47.37 Բժշկական օգնության և սպասարկման համար նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների համար օրենքով չնախատեսված վճարներ գանձելը կամ դրանց տրամադրումը մերժելը

1.Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից օրենքով սահմանված կարգով կնքված պայմանագրի առկայության դեպքում բժշկական օգնության և սպասարկման համար նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների համար օրենքով չնախատեսված վճարներ գանձելը կամ այդ ծառայությունների տրամադրումը մերժելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում յուրաքանչյուր դեպքի համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հարյուրհինսնապատիկի չափով:

2. Սույն հոդվածով նախատեսված արարքը վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նախորդ դեպքի համար նշանակված տուգանքի կրկնապատիկի չափով:

Հոդված 2. Օրենսգրքի 230-րդ հոդվածի 1-ին մասում «47.34-րդ,» բառից հետո լրացնել « 47.36-րդ, 47.37-րդ» բառերը:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ս Գ Ի Ր Ք

Հոդված 47.37 Բժշկական օգնության և սպասարկման համար նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների համար օրենքով չնախատեսված վճարներ գանձելը կամ դրանց տրամադրումը մերժելը

1.Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից օրենքով սահմանված կարգով կնքված պայմանագրի առկայության դեպքում **բժշկական օգնության և սպասարկման համար նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների համար** օրենքով չնախատեսված վճարներ գանձելը կամ այդ ծառայությունների տրամադրումը մերժելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում յուրաքանչյուր դեպքի համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի չափով:

2. Սույն հոդվածով նախատեսված արարքը վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նախորդ դեպքի համար նշանակված տուգանքի կրկնապատիկի չափով:

Հոդված 230. Առողջապահության ոլորտում և աշխատանքային օրենսդրության նկատմամբ վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը

(վերնագիրը խմբ. 21.03.18 ՀՕ-173-Ն, 04.12.19 ՀՕ-266-Ն)

1. Սույն օրենսգրքի 41-րդ, 41.1-ին, 41.2-րդ, 41.6-րդ, 41.9-րդ, 41.10-րդ, 42-րդ և 43-րդ, 45-47.5-րդ, 47.7-47.12-րդ հոդվածներով, 47.15-րդ հոդվածի 1-3-րդ, 7-9-րդ մասերով, 47.18-47.32-րդ, 47.33-րդ և 47.34-րդ, 47.36-րդ, 47.37-րդ, 80-86-րդ (եթե դրանք համարվում են

մթնոլորտային օդի պահպանության սանիտարահիգիենիկ կանոնների և նորմերի խախտումներ), 96.1-ին, 152-րդ հոդվածներով, 156.1-ին հոդվածի 4-րդ և 4.1-ին մասերով, 158-րդ հոդվածի 18-րդ մասով, 158.1-ին, 169.5-րդ, 169.8-րդ հոդվածներով, 169.32-րդ հոդվածի 1-ին մասով (ռազմավարական պաշարների պահուստում ներառվող դեղերի կամ բժշկական արտադրատեսակի մասով), 2-րդ մասի 2-րդ կետով և 3-րդ մասի 2-րդ կետով, 173.1-ին հոդվածի 3-րդ մասով, 173.3-րդ հոդվածով, 182.4-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ և 11-րդ մասերով, 182.5-րդ հոդվածի 3-րդ (դեղորայքի ձեռքբերման և շրջանառության հետ կապված իրավախախտումների մասով), 11-րդ (դեղերի և բժշկական նշանակության ապրանքների արտադրման ու ներմուծման հետ կապված իրավախախտումների մասով) և 14-րդ մասերով, 198-րդ հոդվածով, 201-րդ հոդվածի 3-5-րդ մասերով և 213.2-րդ հոդվածով (դեղերի և բժշկական նշանակության գույքի մասով) նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Առողջապահության ոլորտում և աշխատանքային օրենսդրության նկատմամբ վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը:

2. Առողջապահության ոլորտում և աշխատանքային օրենսդրության նկատմամբ վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի անունից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժեր նշանակելու իրավունք ունեն տեսչական մարմնի ղեկավարը, ղեկավարի տեղակալները և տարածքային կենտրոնների պետերը, իսկ սույն օրենսգրքի 182.4-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ և 11-րդ մասերով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը՝ նաև ստուգայց իրականացնող պաշտոնատար անձինք:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
«ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1309-06.04.2025-ԱՌՀ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցող)	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի եզրակացությունը
1.	ՀՀ կառավարություն	«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով փոփոխվող 11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ	Առաջարկվում է ապաստան հայցողներին ու Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած փախստականներին, ովքեր ընդգրկված են սույն հոդվածի 2-րդ մասի 11-րդ, 12-րդ, 14-րդ և 15-րդ կետերով սահմանված բնակչության խմբերում, ներառել ապահովագրության ենթակա բնակչության խմբերում, նկատի ունենալով, որ նրանք «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի համաձայն, վճարովի աշխատանք և ձեռնարկատիրության գործունեություն իրականացնելու իրավունք ունեն: Իսկ նրանք, ովքեր չեն ներառվի այդ խմբերում, կշարունակեն օրենքի համաձայն օգտվել օրենքով երաշխավորված լրացուցիչ ծառայություններից:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-	Առաջարկվում է հստակեցնել վարձակալական վճար, տոկոս, շահաբաժին, ռոյալթի ստացող ֆիզիկական անձանց կողմից ապահովագրավճար վճարելու համար	Ընդունվել է:	Ընդունվել է:

		րդ հոդվածով փոփոխվող 11-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետ	վարձակալական վճար, տոկոս, շահաբաժին, ռոյալթիի գումարի ստորին շեմը՝ սահմանելով, որ դրանց հանրագումարը տարեկան կազմում է 2 400 000 Հայաստանի Հանրապետության դրամ և ավելի:		
3.		«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով փոփոխվող 11-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետ	Առաջարկվում է հստակեցնել մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումներ իրականացնող ֆիզիկական անձանց (վարորդներ) սահմանումը՝ ներառելով նրանց, ովքեր օրենսդրության համաձայն, միացել են հարկային մարմնի էլեկտրոնային համակարգին և ամեն պատվերի իրականացման դեպքում տրամադրում են պատվիրատուին պատվերի վճարման էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի էլեկտրոնային կտրոն կամ որոնք ուղևորափոխադրումներն իրականացնում են ուղևորափոխադրման ծառայության էլեկտրոնային հարթակով միջոցով	Ընդունվել է:	Ընդունվել է:
4.	ՀՀ կառավարություն	«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 10-րդ հոդվածով փոփոխվող 25-րդ հոդվածի 7-րդ մաս	Առաջարկվում է ուղղել համարակալման մեջ տեղ գտած վրիպակը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
5.	ՀՀ կառավարություն	«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 21-րդ հոդվածով օրենքի 46-րդ մասի 20.1 լրացում	Առաջարկվում է հստակեցնել ապահովգրավճարի վերադարձման պայմանը:	Ընդունվել է:	Ընդունվել է:

6.	ՀՀ կառավարություն	«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 22-րդ և 23-րդ հոդվածներ	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն լրացվել է նախագծով սահմանված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ուժի մեջ մտնելու ժամկետները և այդ կապակցությամբ օրենքի նախագծի 22-րդ և 23-րդ հոդվածները միավորվել են մեկ հոդվածում՝ որպես եզրափակիչ հոդվածներ:	Ընդունվել է:	Ընդունվել է:
7.	ՀՀ կառավարություն	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով փոփոխվող օրենքի 2-րդ հոդված	Առաջարկվում է շտկել համարակլման վրիպակները	Ընդունվել է:	Ընդունվել է:
8.	ՀՀ կառավարություն	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով փոփոխվող 11-րդ հոդվածի 5-րդ մասի 2.1-րդ կետ	Տարընկալումն բացառելու նպատակով «ծառայությունների» բառը փոխարինել «ծառայություններ ստացող» բառերով.	Ընդունվել է:	Ընդունվել է:
9.	ՀՀ կառավարություն	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածով փոփոխվող 37-րդ հոդվածի 10-րդ մաս	Առաջարկվում է շտկել վրիպակը և «շտեմարանից» բառը փոխարինել օրենքում կիրառվող «ռեգիստրից» բառով.	Ընդունվել է:	Ընդունվել է:
10.	ՀՀ կառավարություն	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածով փոփոխվող 37-րդ հոդվածի 11-րդ մաս	Առաջարկվում է հանել «խորհրդատվական» բառը, նկատի ունենալով, որ Բուժաշխատողների էթիկայի հանձնաժողովի որոշումների մի մասը նման բնույթ չունի, օրինակ՝ գործի քննություն սկսելը մերժելու մասին որոշումները.	Ընդունվել է:	Ընդունվել է:
111.	ՀՀ կառավարություն	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում	Առաջարկվում է հիշատակված մասերում «ծածկագրված» բառերը փոխարինել	Ընդունվել է:	Ընդունվել է: